

Ք/Կ՝ 14041



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«24» 12 2024թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 292 - 24

Նախաձեռնող՝

«ՍԹՈՈՒՆ ԱՅԼՆԴ» ՍՊԸ  
Սիսավանի փ./գր./1, Կենտրոն, Երևան

Գործունեությունը՝

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ փեղամասի  
արդյունահանման աշխատանքների  
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 10 թերթ

ԲՓ № 292 - 24

«24» օգոստոսի 2024թ.

**Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի արդյունահանման  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ՍԹՈՈՒՆ ԱՅԼՆԴ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Արագածավան բնակավայր

**Ներածական մաս.** «ՍԹՈՈՒՆ ԱՅԼՆԴ» ՍՊԸ-ի՝ ընդերքօգտագործող կազմակերպության և «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի՝ նախագծող ընկերության կողմից նախատեսվում է Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասը գտնվում է Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի վարչական սահմաններում՝ Արագածավան բնակավայրից միջինը մոտ 8.5 կմ հեռավորության վրա: Մոտակա բնակավայրը Կանչ գյուղն է՝ տեղամասից շուրջ 1.8 կմ հյուսիս-արևմուտք, որի հետ հայցվող տեղամասը կապված է բարեկարգ ավտոճանապարհով:

Տեղամասը տեղադրված է Արտենի լեռան հարավ-արևմտյան լանջին՝ 1390-1428 մ բացարձակ բարձրությունների վրա:

Լեռնագրական տեսակետից՝ տեղամասի հարակից տարածքը ներկայացնում է անտառազուրկ լեռնային շրջանին բնորոշ բլրային ռելիեֆով և սակավ խոտաբուսական ծածկով:

Հանքավայրի շրջանում մերկացող ամենահին առաջացումներն պլիոցենի հրաբխային ապարներ են, ներկայացված Ողջաբերդի (ստորին պլիոցեն) և Արագածի (վերին պլիոցեն) շերտախմբերով:

Տեղամասը գտնվում է բարենպաստ հիդրոերկրաբանական պայմաններում, հանքավայրի սահմաններում գրունտային ջրերը բացակայում են, անտառածածկ չէ, չկան արհեստական տնկված անտառներ, պաշտպանիչ անտառաշերտեր, տարածքին բնորոշ է կիսաանապատային բուսականությունը:



Հանքավայրի և նրան հարակից տարածքներում սողանքներ, կարստեր և փլուզումների առկա չեն:

Օբսիդիանի հանքարդյունահանման աշխատանքների համար նախատեսվող տարածքում առկա չեն Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիներ տեսակներ, չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնական ու պատմամշակութային հուշարձաններ:

Բացահանքերի տարածքում հողաբուսական շերտը բացակայում է:

Հայցվող տարածքում իրականացված օբսիդիանի արդյունահանման աշխատանքների արդյունքում տեղամասում առկա են խախտված տարածքներ՝ բացահանք:

Հաստատված պաշարների 1-С1 հաշվարկային բլոկի եզրագծի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°22'6.186"-հյուսիսային լայնության, 43°44'45.852" - արևելյան երկայնության, իսկ 2-С1 հաշվարկային բլոկի եզրագծի համար՝ 40°22'2.574"- հյուսիսային լայնության, 43°44'48.756' -արևելյան երկայնության:

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության 2017թ. մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի պաշարները հաստատելու մասին» թիվ 2 եզրակացությամբ:

Որակական ցուցանիշներով հանքավայրի օբսիդիանը համապատասխանում է 41.07-90 ՕՍՏ-ի տեխնիկական պահանջներին և կարող է օգտագործվել արհեստագործական քարի արդյունահանման և դեկորատիվ-գեղազարդային իրերի արտադրության համար:

Տեղամասը շահագործվել է 2017-2021թ. ընթացքում, որից հետո հանքավայրի 3-րդ տեղամասի մնացորդային պաշարները 01.01.2021թ. դրությամբ С1 կարգով կազմում են 105.028 հազ. տ:

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասում օգտակար հանածոյի մնացորդային պաշարները 01.01.2023թ. դրությամբ կազմում են 78026 տ, այդ՝ թվում 1-С1 բլոկում պաշարները 45426 տ կամ 19496 մ<sup>3</sup>, 2-С1 բլոկում՝ 33255 տ կամ 14396 մ<sup>3</sup>:

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի հիդրոերկրաբանական, լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են բաց եղանակով շահագործման համար:

Լեռնային աշխատանքներն իրականացվելու են երկու՝ I և II բացահանքերով: I-ին բացահանքում լեռնային աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1426 մ-ից 1406 մ, իսկ II-րդ բացահանքում՝ 1419 մ-ից մինչև 1401 մ նիշերի միջև:

Հայցվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 1.5 հա:

Նախատեսվող I և II բացահանքերի վերջնական եզրագծերի պարամետրերը հետևյալն են. I բացահանք

- բացահանքի երկարությունը մակերևույթում՝ 140 մ,
- բացահանքի երկարությունը հատակում՝ 127 մ,
- բացահանքի լայնությունը մակերևույթում՝ 46 մ
- բացահանքի լայնությունը հատակում՝ 33 մ
- առավելագույն խորություն՝ 19 մ,
- կողերի թեքման անկյունը՝ 45°,

II բացահանք

- բացահանքի երկարությունը մակերևույթում՝ 219 մ,
- բացահանքի երկարությունը հատակում՝ 144 մ,
- բացահանքի լայնությունը մակերևույթում՝ 38 մ,
- բացահանքի լայնությունը հատակում՝ 16 մ,



- առավելագույն խորություն՝ 22 մ,

- կողերի թեքման անկյունը՝ 45°,

Նախատեսվում է Արտենիի օբյեկտի հանքավայրի 3-րդ տեղամասի օգտակար հանածոյի տարեկան արդյունահանում՝ 3950.0 մ<sup>3</sup> (9164 տ) կամ արհեստագործական տեսակավոր քարի 858.7 տ օգտակար հանածոյի արդյունահանվող տարեկան ծավալով, տարեկան մարվող պաշարների քանակը՝ 4489 մ<sup>3</sup>:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 7.8 տարի:

Ի բացահանքի ծայրակետերի կոորդինատներն են՝

1	4471243.1084	8393472.5457	30 4471244.4383	8393487.2205
2	4471243.5089	8393472.8652	31 4471244.0729	8393488.9631
3	4471244.1959	8393473.4349	32 4471243.7421	8393490.5567
4	4471245.0496	8393474.1557	33 4471243.4641	8393491.8969
5	4471245.9756	8393474.9485	34 4471243.2570	8393492.8794
6	4471246.8793	8393475.7343	35 4471243.1389	8393493.3998
7	4471247.6663	8393476.4341	36 4471242.9627	8393494.0287
8	4471248.2421	8393476.9688	37 4471242.7570	8393494.7189
9	4471248.5123	8393477.2595	38 4471242.6524	8393495.0588
10	4471248.6788	8393477.5753	39 4471242.5612	8393495.3551
11	4471248.8098	8393477.9234	40 4471242.4145	8393495.8219
12	4471248.8634	8393478.1946	41 4471242.3564	8393496.0041
13	4471248.8609	8393478.3786	42 4471242.3224	8393496.0437
14	4471248.8344	8393478.4866	43 4471242.2147	8393496.2157
15	4471248.8128	8393478.5351	44 4471241.9151	8393496.6895
16	4471248.7856	8393478.5709	45 4471241.5073	8393497.3256
17	4471248.6895	8393478.6353	46 4471241.4569	8393497.4044
18	4471248.4572	8393478.7191	47 4471240.8735	8393498.2995
19	4471248.0285	8393478.8219	48 4471240.4484	8393498.9383
20	4471247.3988	8393478.9675	49 4471246.8461	8393511.5727
21	4471246.7911	8393479.1730	50 4471250.6741	8393515.3571
22	4471246.3406	8393479.4823	51 4471254.4200	8393518.7959
23	4471246.1489	8393479.9266	52 4471257.1938	8393521.2229
24	4471245.8828	8393480.8483	53 4471261.3590	8393524.7864
25	4471245.8001	8393481.1805	54 4471264.7807	8393527.7475
26	4471245.5606	8393482.1429	55 4471267.3706	8393530.1372
27	4471245.2003	8393483.7060	56 4471268.6227	8393531.2924
28	4471244.8202	8393485.4334	57 4471270.4565	8393533.1811
29	4471244.7322	8393485.8449	58 4471270.7567	8393533.4903
59	4471273.0450	8393536.1009	101 4471233.3162	8393456.9278
60	4471276.1097	8393540.1051	102 4471232.9576	8393457.7835
61	4471278.4553	8393543.6998	103 4471232.8211	8393458.2580
62	4471280.3991	8393547.2168	104 4471232.6874	8393458.7228
63	4471282.1122	8393551.1480	105 4471232.4570	8393459.7467
64	4471282.7964	8393553.1618	106 4471232.2730	8393460.8148
65	4471282.9754	8393554.6276	107 4471232.1419	8393461.8869
66	4471283.0491	8393555.8007	108 4471232.0704	8393462.9224
67	4471282.8103	8393557.8358	109 4471232.0701	8393462.9779
68	4471282.5956	8393558.6712	110 4471232.0650	8393463.8812
69	4471281.1062	8393564.2974	111 4471232.1323	8393464.7228
70	4471280.3947	8393567.7584	112 4471232.2429	8393465.2845
71	4471280.0683	8393569.9256	113 4471232.3612	8393465.6272
72	4471279.8153	8393572.7322	114 4471232.4577	8393465.8134
73	4471279.8663	8393576.6533	115 4471232.5113	8393465.8929
74	4471280.3385	8393580.3444	116 4471232.5876	8393465.9845
75	4471280.9047	8393583.3524	117 4471232.6689	8393466.0555
76	4471280.9047	8393583.3524	118 4471232.7679	8393466.1421
77	4471281.6883	8393587.4801	119 4471233.1004	8393466.3220



78	4471294.1381	8393578.4251	120	4471233.6379	8393466.4763
79	4471302.2252	8393572.5431	121	4471234.4157	8393466.5756
80	4471327.2351	8393555.1966	122	4471235.2523	8393466.6270
81	4471320.6485	8393546.1710	123	4471236.0842	8393466.6912
82	4471302.6941	8393516.0028	124	4471236.8483	8393466.8284
83	4471275.8591	8393468.9958	125	4471237.4812	8393467.0992
84	4471254.1769	8393434.4808	126	4471238.0228	8393467.5521
85	4471250.2185	8393437.8056	127	4471238.5438	8393468.1470
86	4471243.8403	8393442.5212	128	4471239.0269	8393468.8119
87	4471243.4453	8393442.9425	129	4471239.4547	8393469.4743
88	4471242.8554	8393443.4792	130	4471239.7410	8393469.9482
89	4471242.2401	8393444.0204	131	4471239.8099	8393470.0622
90	4471241.6424	8393444.5902	132	4471240.0753	8393470.5033
91	4471241.1056	8393445.2126	133	4471240.2335	8393470.7253
92	4471240.6765	8393445.7910	134	4471240.4740	8393470.8979
93	4471240.0463	8393446.6525	135	4471240.7301	8393471.0341
94	4471239.2613	8393447.7406	136	4471240.9955	8393471.1799
95	4471238.3677	8393448.9982	137	4471241.2479	8393471.3329
96	4471237.4118	8393450.3687	138	4471241.6435	8393471.5730
97	4471236.4399	8393451.7954	139	4471242.1216	8393471.8712
98	4471235.4981	8393453.2214	140	4471242.6158	8393472.1946
99	4471234.6327	8393454.5900	141	4471243.0831	8393472.5255
100	4471233.8900	8393455.8443			

II բացահանքի ծայրակետերի կորդինատներն են՝

1	4471079.2483	8393469.7139	43	4471182.5090	8393558.9633
2	4471088.9325	8393468.3451	44	4471183.7309	8393559.3889
3	4471091.2489	8393468.0177	45	4471184.8883	8393559.7922
4	4471098.3666	8393467.7784	46	4471185.3297	8393559.9751
5	4471101.7850	8393467.9582	47	4471186.5932	8393560.4989
6	4471101.9164	8393467.9652	48	4471187.1162	8393560.7161
7	4471109.9623	8393470.2741	49	4471187.7255	8393560.9688
8	4471115.3704	8393473.8601	50	4471188.3430	8393561.2250
9	4471119.5404	8393478.7006	51	4471188.5946	8393561.3299
10	4471123.4840	8393485.5281	52	4471188.9059	8393561.4590
11	4471127.0667	8393493.8621	53	4471189.0835	8393561.5331
12	4471130.6574	8393503.9855	54	4471189.4365	8393561.6977
13	4471132.0887	8393510.7270	55	4471189.7143	8393561.8259
14	4471134.4826	8393515.1673	56	4471189.8750	8393561.9017
15	4471136.8518	8393521.4828	57	4471190.1312	8393562.0207
16	4471142.3269	8393530.6751	58	4471190.3489	8393562.1221
17	4471144.7366	8393534.0557	59	4471190.5845	8393562.2335
18	4471151.7434	8393541.0609	60	4471190.8077	8393562.3428
19	4471151.6842	8393543.8455	61	4471191.0241	8393562.4566
20	4471155.7095	8393548.5739	62	4471191.2274	8393562.5497
21	4471157.4047	8393549.7809	63	4471191.7680	8393562.8413
22	4471158.4409	8393550.4599	64	4471192.0924	8393562.9900
23	4471159.3412	8393551.0489	65	4471192.5282	8393563.2350
24	4471159.6556	8393551.2371	66	4471193.1349	8393563.6000
25	4471160.0616	8393551.4852	67	4471193.3999	8393563.7641
26	4471160.3787	8393551.6589	68	4471194.3860	8393564.3862
27	4471160.5177	8393551.7459	69	4471195.2823	8393564.9578
28	4471161.0874	8393552.0549	70	4471195.8332	8393565.3083
29	4471161.6678	8393552.3873	71	4471196.1308	8393565.5129
30	4471162.7398	8393552.9717	72	4471197.0617	8393566.1531
31	4471163.0554	8393553.1420	73	4471197.4174	8393566.3879
32	4471164.2535	8393553.7930	74	4471197.8776	8393566.6844
33	4471164.7003	8393553.9206	75	4471198.5756	8393567.1524
34	4471168.0826	8393554.7717	76	4471199.2260	8393567.5508



35	4471170.8244	8393555.4525	77	4471200.0299	8393568.0321
36	4471171.9450	8393555.7268	78	4471200.8074	8393568.4909
37	4471173.4648	8393556.1542	79	4471200.8976	8393568.5441
38	4471173.7881	8393556.2535	80	4471201.2439	8393568.7643
39	4471176.3755	8393557.0122	81	4471202.0581	8393569.2414
40	4471178.5838	8393557.6691	82	4471202.1925	8393569.3299
41	4471180.0350	8393558.1029	83	4471202.4176	8393569.4882
42	4471180.6610	8393558.3204	84	4471203.3839	8393570.1247
85	4471204.2830	8393570.7167	122	4471215.6428	8393602.6995
86	4471204.5608	8393570.9093	123	4471215.7505	8393603.0284
87	4471205.4597	8393571.5033	124	4471216.5222	8393605.4009
88	4471206.2869	8393572.0514	125	4471217.3190	8393607.8608
89	4471207.3614	8393572.7731	126	4471217.7139	8393609.0843
90	4471208.0983	8393573.2669	127	4471218.1098	8393610.3106
91	4471208.7674	8393573.7211	128	4471218.8639	8393612.6524
92	4471208.0566	8393574.6468	129	4471219.3405	8393614.1355
93	4471207.3200	8393575.6060	130	4471219.5504	8393614.7886
94	4471206.2641	8393576.9791	131	4471220.1384	8393616.6214
95	4471205.9814	8393577.3454	132	4471220.5971	8393618.0531
96	4471205.5526	8393577.9049	133	4471220.8956	8393618.9859
97	4471205.1910	8393578.5735	134	4471221.0016	8393619.3227
98	4471204.9527	8393579.0143	135	4471221.0450	8393619.4740
99	4471204.3506	8393580.0806	136	4471221.0449	8393619.5140
100	4471203.9388	8393580.8056	137	4471221.0449	8393619.5642
101	4471203.6214	8393581.3642	138	4471221.0543	8393619.6511
102	4471203.0431	8393582.3832	139	4471221.1658	8393619.7006
103	4471204.2458	8393583.9842	140	4471221.3265	8393619.7339
104	4471205.0602	8393585.0726	141	4471226.0798	8393618.0558
105	4471205.8590	8393586.1402	142	4471228.3746	8393617.2527
106	4471206.2435	8393586.6555	143	4471230.9399	8393616.3634
107	4471207.3844	8393588.1847	144	4471233.6893	8393615.4220
108	4471208.7693	8393590.0447	145	4471235.8213	8393614.7031
109	4471209.9611	8393591.6467	146	4471240.1895	8393613.2617
110	4471210.9069	8393592.9177	147	4471241.7371	8393616.7947
111	4471211.5540	8393593.7843	148	4471236.6018	8393620.5772
112	4471211.8498	8393594.1733	149	4471226.0103	8393628.3718
113	4471212.1646	8393594.5277	150	4471172.3046	8393592.9943
114	4471212.4852	8393594.8531	151	4471151.6241	8393579.3714
115	4471212.7980	8393595.1737	152	4471137.1787	8393569.8558
116	4471213.0897	8393595.5143	153	4471124.4609	8393560.3944
117	4471213.3467	8393595.8993	154	4471115.3558	8393553.6207
118	4471213.5306	8393596.3682	155	4471111.1752	8393550.5105
119	4471213.8938	8393597.4134	156	4471097.6268	8393519.8760
120	4471214.4054	8393598.9369	157	4471090.3325	8393503.4434
121	4471215.0346	8393600.8412	158	4471084.7478	8393486.4491

Երկու բացահանքերի միջև եղած ամենամոտ կետերի հեռավորությունը կազմում է մոտ 50 մ, ամենահեռու կետերինը՝ մոտ 110 մ, միջինը հեռավորությունը՝ 75-80 մ:

Հաշվի առնելով տեխնոլոգիական նախագծման նորմերի պահանջները, հանքավայրի բարձր լեռնային տեղադիրքը, բացահանքի ոչ մեծ արտադրողականությունը՝ բացահանքի աշխատանքները կիրականացվեն ապրիլից-հոկտեմբեր ամիսներին:

Քանի որ, հանքավայրում իրականացվել են բաց լեռնային աշխատանքներ, որի արդյունքում արդյունահանվել է 672 տ օբսիդիանի զանգված կամ 63.2 տ արհեստագործական տեսակավոր քար, կատարվել են լեռնային աշխատանքներ, այդ իսկ պատճառով բացահանքն արդեն բացված է արտաքին խորաներով:



Լեռնակապիտալ աշխատանքների ընթացքում նախատեսվում է՝ մակաբացման ապարների հեռացում մոտ 61 մ<sup>3</sup>, օգտակար հանածոյի արդյունահանում՝ 135 մ<sup>3</sup>, ոչ կոնդիցիոն հանքաքարի արդյունահանում 123 մ<sup>3</sup>:

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասում նախատեսվում է իրականացնել ընդլայնական մեկկողմանի մշակման համակարգը, մակաբացման ապարների արտաքին և ներքին լցակույտաձևավորմամբ: Լեռնային աշխատանքների ուղղությունը I բացահանքում՝ հյուսիս-հարավից դեպի արևմուտք, իսկ II բացահանքում՝ հյուսիս-հարավից դեպի արևելք:

Բացահանքերում ընդգրկվելու են օբսիդիանի հանութաբարձման ու տեղափոխման, մակաբացման ապարների հանութաբարձման ու տեղափոխման, ինչպես նաև լցակույտաձևավորման աշխատանքներ: Լեռնային զանգվածի բարձումը ավտոտրանսպորտի մեջ նախատեսվում է իրականացնել NEW HOLLAND E256B բացահանքային էքսկավատորով, ոչ կոնդիցիոն օգտակար հանածոն և մակաբացման ապարների տեղափոխումը դեպի արտաքին և ներքին լցակույտեր՝ բացահանքային ավտոտրանսպորտով՝ KamAZ-43118 ավտոինքնաթափերով, օգտակար հանածոյի տեղափոխումը իրականացվելու է սպառողների տրանսպորտային միջոցներով, լցակույտաձևավորումը՝ բուլդոզերներով:

Արհեստագործական տեսակավոր քարերը կառանձնացվեն օբսիդիանի զանգվածից և կկուտակվեն աշխատանքային հրապարակում, այնուհետև արհեստագործական տեսակավոր քարերը կբարձվեն սպառողների տրանսպորտային միջոցները: Անհրաժեշտության դեպքում կարծր ապարների դեպքում կօգտագործվի էքսկավատորի հատիչ մուրճը: Ոչ կոնդիցիոն օգտակար հանածոյի զանգվածը կտեղափոխվի ժամանակավոր լցակույտ:

I-ին բացահանքի մակաբացման ապարների 8924 մ<sup>3</sup> չփխրեցված ծավալը (փխրեցված ծավալը՝ 10708 մ<sup>3</sup>) նախատեսվում է տեղադրել II բացահանքի հյուսիսային մասի՝ բացահանքին հարող տարածքում՝ արտաքին ժամանակավոր լցակույտում: II բացահանքից 11159 մ<sup>3</sup> չփխրեցված ծավալով (փխրեցված ծավալը՝ 13391 մ<sup>3</sup>) մակաբացման ապարները նույնպես կտեղադրվեն այդ արտաքին ժամանակավոր լցակույտում: Լցակույտում մակաբացման ապարների ծավալը կկազմի 24099 մ<sup>3</sup>, լցակույտի մակերեսը՝ 0.8 հա, բարձրությունը 9 մ է, իսկ լցակույտի թեքման գլխավոր անկյունը՝ 35<sup>0</sup>:

Ոչ կոնդիցիոն օբսիդիանը նախատեսվում է տեղավորել I բացահանքի հարավ-արևմտյան մասում ձևավորվելիք արտաքին լցակույտում, որի ծավալը կազմում է 32098 մ<sup>3</sup>. լցակույտի մակերեսը՝ 0.97 հա, բարձրությունը՝ 15 մ է, իսկ թեքման գլխավոր անկյունը՝ 35<sup>0</sup>:

Տեղամասի շահագործման ընթացքում տեղի կունենան օգտակար հանածոյի կորուստներ, որոնք բնամասերի տեսքով կմնան ընդերքում՝ տեղամասի կողերում՝ հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար և կորուստներ՝ որոնք առաջանում են օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ: Կորուստների ընդհանուր քանակը I բացահանքում կկազմի՝ 3221 մ<sup>3</sup>, II բացահանքում՝ 1162 մ<sup>3</sup>:

Բացահանք տեխնիկական ջրով մատակարարումը նախատեսվում է կատարել արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և ժամանակավոր լցակույտերի ջրցանման նպատակով: Տեխնիկական ջրամատակարարումը նախատեսվում է կազմակերպել KO-002 մակնիշի ջրցան-վացող մեքենայով, խմելու ջրի մատակարարումը՝ BL-1.2 մակնիշի ջրի ցիստեռնով:

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի ազդեցություններ շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ռեսուրսներ, օդային ավազան, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա: Հիմնական ազդեցությունները կդիտվեն փոշեառաջացման օջախների և լանդշաֆտի փոփոխության տեսքով:



Հանքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր կհանդիսանան տրանսպորտը և մաքրահանութային աշխատանքները, օդային ավազան արտանետվող վնասակար նյութերը՝ անօրգանական փոշին (բուլդոզերային, էքսկավատորային, տրանսպորտային, լցակույտ), ազոտի ու ածխածնի օքսիդները և ածխաջրածինները (դիզելային ու բենզինային վառելիքով աշխատող մեխանիզմներ):

Համաձայն գնահատման հաշվետվության՝ բացահանքում վնասակար գազերի առավելագույն խտությունները չեն գերազանցելու սահմանային թույլատրելիները:

Գնահատման հաշվետվությունում իրականացվել է նաև «Эко Центр» համակարգչային ծրագրով արտանետվող վնասակար նյութերի ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ, որի արդյունքների համաձայն սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են սահմանված նորմերում:

Օգտակար հանածոների բաց եղանակով արդյունահանման ժամանակ բացահանքի, մակաբացման ապարների լցակույտերի, արտադրական հրապարակների հողային ռեսուրսների վրա կլինի ուղղակի ազդեցություն՝ կոդի տարածքում տեխնածին լանդշաֆտի ձևավորում, արտադրական հրապարակի հնարավոր աղտոտում նավթամթերքներով և անուղղակի ազդեցություն՝ հողի մակերևույթին մթնոլորտ արտանետվող փոշու և աղտոտիչ նյութերի նստեցում:

Հանքարդյունահանման աշխատանքների արդյունքում ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հանքի շահագործման աշխատանքների ընթացքում կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցություն կարող են ունենալ՝ օգտակար հանածոյի հանման-բեռնման աշխատանքների աղմուկը, թրթռումները, փոշին, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը և դիզելային վառելիքի, քսայուղերի թափվածքները և այլն, նախատեսվող աշխատանքների ազդեցությունը բուսական և կենդանական աշխարհի վրա կլինի նվազագույն:

Հանքավայրի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ բացահանքում իրականացվող ապարների փխրեցման և բարձման, լցակույտում ապարների բեռնաթափման և հարթեցման աշխատանքները, ավտոտրանսպորտի շարժը: Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից, բլրային ռելիեֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից շատ ցածր: Հանքավայրի արդյունահանման գործընթացների հետ կապված կառաջանա առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, ինչը ևս կլինեն սահմանային թույլատրելի նորմերում:

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի արդյունահանման աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ թափոնատեսակները՝ բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, հալոգեն չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր, բանեցված դիզելային յուղեր, բանեցված գործվածքի կորդով ավտոդողեր, յուղոտված լաթեր, փխրուն մակաբացման ապարներ, չտեսակավորված կենցաղային աղբ: Թափոնների քանակի, վտանգավորության՝ դասի, ծածակագրերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի շահագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասը կկազմի՝ 9880.7 հազ ՀՀ դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բնութագրիչների (օդ, հողային, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա վնասակար ազդեցության





մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնցից են՝

- տեխնիկատրանսպորտային միջոցների սարքին վիճակով շահագործում՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը,
- մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում մասնագիտացված տարածքներում,
- ինքնաթափի վրա կատալիտիկ չեզոքացուցիչների տեղադրում,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, համապատասխան թեքության ապահովում, ինչն էլ կապահովի թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- հողի աղտոտումը կանխելու նպատակով՝ աղբամանների տեղադրում,
- փոշենստեցման նպատակով՝ փոշեառաջացման օջախների (բացահանք, աշխատանքային հրապարակներ, մոտեցնող ճանապարհներ և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- փոշենստեցման համար ջրցանի այնպիսի ծավալներով իրականացում, որը չի առաջացնի արտահոսք,
- արտադրական տարածքի կենցաղային կեղտաջրերի կուտակում բետոնապատ անթափանց հորում, պարբերաբար հեռացում հատուկ ծառայության ուժերով,
- աղմուկի նվազեցման նպատակով մեքենաների սարքավորում ձայնախլացուցիչներով և այլն:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել խախտված տարածքների տեխնիկական ռեկուլտիվացիա՝ բացահանքերում, արտաքին լցակույտում: Մշակման վերջում II բացահանքի հյուսիսային մասի՝ բացահանքին հարող տարածքում ձևավորված արտաքին ժամանակավոր լցակույտից նախատեսվում է մակաբացման ապարները ամբողջովին հետ տանել II բացահանքի մշակված տարածություն, իսկ ոչ կոնդիցիոն օգտակար հանածոյի լցակույտից որոշ քանակություն I բացահանքի մշակված տարածություն և փոել դրանց հատակին՝ իրականացնելով բացահանքերի խախտված տարածքների ռեկուլտիվացիան:

Տեխնիկական ռեկուլտիվացիոն աշխատանքները կկատարվեն էքսկավատոր, ավտոինքնաթափ, բուլդոզերի կիրառմամբ:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կենսաբանական փուլն իրականացվելու է օգտակար հանածոյի ամբողջ պաշարների արդյունահանումից հետո՝ տեխնիկական ռեկուլտիվացիայի ենթարկված տարածքում կորնգան ցանելու եղանակով:

Տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը կկազմի 4800.7 հազ. ՀՀ դրամ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվում են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազում, անհողմություն, մառախուղի առաջացում), հնարավոր արտակարգ իրավիճակների, հակավթարային, աղմուկի և թրթռման վերահսկողության, վայրի բնության պահպանության և հսկողության մի շարք միջոցառումներ, որոնք ներկայացված են գնահատման հաշվետվությունում:

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի շահագործման ընթացքում կիրականացվի նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետումների, աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտություններ ընդունվելու են ածխածնի օբսիդի համար՝  $5 \text{ մլգ/մ}^3$ , ազոտի երկօքսիդի համար՝  $0.085 \text{ մլգ/մ}^3$ , մրի համար՝  $0.15 \text{ մլգ/մ}^3$ :



2. լեռնատրանսպորտային սարքավորումների՝ մասնավորապես՝ չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,
3. հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ անգամ հաճախականությամբ,
4. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ ըստ անհրաժեշտության:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում ներկայացված են նաև մշտադիտարկումների օբյեկտները, վայրերը, տեսակները, ցուցանիշները և նվազագույն հաճախականությունները:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան 200 հազ. ՀՀ դրամ:

**Պարճառարանական մաս.** Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ: Համայնքի ղեկավարի և մասնակիցների կողմից բարձրացվել և կարևորվել է հանքավայրի առանց պայթեցման աշխատանքների շահագործման իրականացում, աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը: Քննարկումների արդյունքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում՝ հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունն օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա՝ կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Արտենի օբսիդիանի հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման անվերադարձ ազդեցության



կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջներով, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

3. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը՝ կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը:

4. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՍԹՈՈՒՆ ԱՅԼՆԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայր Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիբյան